

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք.Երևան

N 1853 - Ա

«03» հուլիս 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՂԻ
ՎԱՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

- 1) «Տուբերկուլոզի վարակի հսկողության մեթոդական ուղեցույցը՝ համաձայն Հավելված 1-ի:
- 2) «Վիրաբուժական դիմակների դերի վերաբերյալ» ցուցումները՝ համաձայն Հավելված 2-ի:
- 3) «Խորխի նմուշառման և հազի առաջացման» ցուցումները՝ համաձայն Հավելված 3-ի:
- 4) «Շնչադիմակի ընտրության և համապատասխանության մասին» ուղեցույցը՝ համաձայն Հավելված 4-ի:
- 5) «Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների վարակի հսկողության միջոցառումների օրինակելի ծրագիրը»՝ համաձայն Հավելված 5-ի:

- 6) «Հակատուբերկուլոզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների վարակի հսկողության միջոցառումների օրինակելի ծրագիրը»՝ համաձայն Հավելված 6-ի:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներին և տուբերկուլոզի բուժման ստացիոնար բժշկական ծառայություններ իրականացնողներին՝ ի ղեկավարումն ընդունել սույն հրամանի Հավելված 1-ով, 2-ով, 3-ով 4-ով, 5-ով և 6-ով հաստատված տուբերկուլոզի վարակի հսկողության պահանջները:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ